«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի N 1178-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2018 թ. N _____- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ

ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի N 1180-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1178-Ն ՈՐՈՇՈՒՄՆ

ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 37-րդ հոդվածների պահանջներով՝ Կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին» N

1180-Ն որոշմամբ հաստատված կարգում (այսուհետ՝ կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) ուժը կորցրած ճանաչել կարգի 2-րդ կետի 19-րդ և 21-րդ ենթակետերը.

2) կարգի 2-րդ կետը լրացնել նոր 23)-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«23) տարահանման պլան-ուրվագիծ՝ փաստաթուղթ, որը նախատեսված է վտանգավոր տարածքից մարդկանց տարահանման կազմակերպման համար, որտեղ նշված են շինության մուտքերը, ելքերը, վթարային ելքերը և պայմանական նշաններ: տարահանման պլան-ուրվագիծը պարտադիր է բոլոր շինությունների համար՝ բացառությամբ բնակելի շենքերի:».

3) կարգի 14-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«14. Քաղաքացիական պաշտպանության պետերը՝

1) պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների (5000 և ավելի բնակիչ ունեցող) ղեկավարները, հաստատում են վտանգավոր տարածքից անվտանգ տարածք բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլան՝ համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ.

2) պետական կառավարման համակարգի մարմինների ու կազմակերպությունների ղեկավարները, հաստատում են վտանգավոր տարածքից անվտանգ տարածք բնակչության տարահանման պլան-ուրվագիծ՝ համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ:».

3) ուժը կորցրած ճանաչել կարգի 31-րդ կետի 2-րդ ենթակետի գ) և զ) պարբերությունները.

4) ուժը կորցրած ճանաչել կարգի 40-րդ կետը.

5) ուժը կորցրած ճանաչել կարգի 43-րդ կետը.

6) ուժը կորցրած ճանաչել կարգի 44-րդ կետը.

7) կարգի 54-րդ կետում «ձևերը» բառից հետո լրացնել «և տարահանման պլան-ուրվագծի կազմման մեթոդիկան ու պայմանական նշանները» բառերը.

8) կարգը լրացնել նոր 64-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«64. Մշակութային արժեքների համար նախատեսվող անվտանգ տարածքների ջերմախոնավային ռեժիմը, մշակութային արժեքների փաթեթ¬ավո¬րումը, փաստաթղթավորումը, անվտանգ տարածք պահպանության հանձնումն ու վերադարձն իրականացվում է մշակույթի նախարարի կողմից սահմանված կարգով:»:

2. Տարածքային կառավարման և զարգացման նախարարին՝ 12-ամսյա ժամկետում ընտրել մշակութային արժեքների համար անվտանգ տարածքներ՝ համաձայն մշակույթի նախարարության կողմից ներկայացված պահանջների:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի «Արտակարգ իրավիճակներում ազգային գրադարանային հավաքածուի տարահանման և պաշտպանության կարգը սահմանելու մասին» N 1178-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ